

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆ ՍԵՂՐԱԿ ԹՈՔԱՏԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԻԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԵՂՐԱԿ ԹՈՔԱՏ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ**

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Աստուծոյ ողորմած կամքով Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին ուրախ առիթ ունեցանք հանդիպել Ձեզ եւ իրազեկ դառնալ Ձեր ազգաշէն ու եկեղեցաշէն գործունէութեան հարուստ վաստակին:

Պոլսահայ կեանքից ներս ծաւալած Ձեր բազմադիւն գործունէութիւնը իրաւամբ արժանի է բարձր գնահատանքի: Երկար տարիներ լինելով անդամ Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան, եւ ապա ընտրուելով նաեւ ատենապետ, Դուք Ձեր փորձն ու կարողութիւնները, ինչպէս եւ նիւթական միջոցները սիրով ի սպաս էք բերել, որպէսզի խնամատար հաստատութիւնը յաջողութեամբ յաղթահարի իր առջեւ ծառայած դժուարութիւնները եւ շարունակի իր կոչմանը հաւատարիմ անհրաժեշտ խնամք ու օգնութիւն պարգեւել կարօտեալ անձերի: Կ. Պոլիս Մեր այցի ընթացքին Պատրիարք Սրբազանի եւ Մեզ ուղեկից հոգեւորականների հետ եղանք Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցում, ականատես դարձանք ինչպէս Ձեր գործունէութեան տարիներին, այնպէս եւ դրանից յետոյ իրենց ծառայութիւնը բերող բոլոր պատասխանատուների անձնուէր աշխատանքի բարի արդիւնքներին: Ուրախութիւն է Հայրապետիս համար, որ Ձեր երկարամեայ նուիրեալ ծառայութիւններով վաստակել էք անկեղծ սէրն ու յարգանքը պոլսահայ համայնքի:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ եկեղեցական կեանքից ներս Ձեր իրագործումներին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին շէն ու պայծառ տեսնելու նախանձախնդրութեամբ Դուք աշխուժօրէն մասնակցել էք Սկիւտարի եկեղեցու համայնքային կեանքին, կամաւորաբար ստանձնել բազմաթիւ յանձնարարութիւններ ի նպաստ Պատրիարքարանի գործունէութեան, յամենայնի դրսեւորելով Ձեր եկեղեցասէր ու ազգասէր ոգին: Ուրախ ենք նշելու, որ եկեղեցաշէն ծրագրերին բերած

Ձեր` դրուատանքի արժանի մասնակցությունը մեծ արգասաւորութեամբ ծառայում է ի փառս մեր Մայրենի Եկեղեցու եւ յանսասանութիւն մեր ժողովրդի:

Ձեր հաւատաւոր ու ազգասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Սեդանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենախնամն Աստուած` հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով` Իր օրհնութեան ներքոյ պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ`

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 371